ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 85

«15» 11 202/ թ. ք. Երևան

ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇԱՐՔԸ ԴԱՍՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՄՇԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 25 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ դատախազության համակարգում պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը մշակող հանձնաժողովի նոր կազմ ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով, հիմք ընդունելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածները, ղեկավարվելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Ստեղծել պետական ու ծառայողական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը մշակող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Դավթյան Արթուր -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (հանձնաժողովի նախագահ)
Չախոյան Արթուր -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ

Ամիրխանյան Սիրո -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ
Նավասարդյան Համայակ -	Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Գևորգյան Թամարա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի գլխավոր մասնագետ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 10.03.2016թ. «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Պետական և ծառայողական գաղտնիքների շարքը դասվող տեղեկությունների ցանկը մշակող հանձնաժողով ստեղծելու մասին» 2006 թվականի մարտի 13-ի հրամանն ուժը կորցրած ճանաչելու և պետական ու ծառայողական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը մշակող հանձնաժողով ստեղծելու մասին» N 25 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ